

## «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոն

Երևան, մարտի 04, 2008թ.

### Մամլո հաղորդագրություն

#### Հայաստանը զբոսաշրջության մրցունակությամբ աշխարհում 89-րդն է

«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը, որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՉՏՖ) Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպություն, մասնակցել է «2008թ. Ջբոսաշրջության համաշխարհային մրցունակության զեկույցի» պատրաստմանը: Համաշխարհային տնտեսական ֆորումը զեկույցը հրատարակում է երկրորդ անգամ: Այն ընդգրկում վերլուծական ուսումնասիրություն է, որտեղ գնահատված են 130 երկրների զբոսաշրջության ոլորտի մրցունակությունը:

Ըստ զեկույցի, աշխարհի զբոսաշրջության ոլորտում ամենամրցունակ երկիրը Շվեյցարիան է, որին հետևում են Ավստրիան և Գերմանիան: Մրցունակությամբ ամենաթույլ երկրներն են Չադը, Լեսոտոն և Բուրունդին:

#### Հայաստանի արդյունքները

Հայաստանն աշխարհում գրավում է 89-րդ տեղը 130 երկրների մեջ ըստ Ջբոսաշրջության համաշխարհային մրցունակության ցուցիչի՝ նախորդ տարվա համեմատ կորցնելով 15 տեղ: Հայաստանը ԱՊՀ երկրների թվում գրավում է 5-րդ տեղը՝ զիջելով միայն Ռուսաստանին (64), Վրաստանին (72), Ուկրաինային (77) և Ադրբեջանին (79):

Ջբոսաշրջության համաշխարհային մրցունակության համաթիվը բաղկացած է 3 ենթահամաթվերից.

1. զբոսաշրջությունը կանոնակարգող դաշտ
2. զբոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածքներ,
3. մարդկային, մշակութային և բնական ռեսուրսներ:

Ջբոսաշրջությունը կանոնակարգող դաշտի տեսանկյունից Հայաստանը գրավում է համեմատաբար բարձր՝ 57-րդ տեղը, իսկ ըստ մարդկային, մշակութային և բնական ռեսուրսների՝ 94-րդ տեղը: Հայաստանի դիրքի վրա հատկապես բացասաբար է ազդել զբոսաշրջության բիզնես միջավայրի և ենթակառուցվածքների ենթահամաթիվը, որով Հայաստանը գրավում է 108-րդ տեղը:

Հայաստանի մրցունակ առավելություններից հատկանշական են.

- սանիտարահիգիենիկ պայմանները
- զբոսաշրջիկների անվտանգությունը և ապահովությունը
- զբոսաշրջության ոլորտի գնային մրցունակությունը
- զբոսաշրջիկների նկատմամբ վերաբերմունքը

Իսկ զբոսաշրջության բնագավառի մրցունակության հիմնական թերությունները դիտվել են հետևյալ գործոնների զծով.

- վիզային ռեժիմն այն երկրների հետ, որոնց քաղաքացիներն ամենից շատ են ճանապարհորդում (օր.՝ Գերմանիա, Իտալիա)
- շրջակա միջավայրի պաշտպանությունը և որակը,
- ներքին տրասպորտային ենթակառուցվածքը,
- մարկետինգի և բրենդինգի արդյունավետության մակարդակը,
- զբոսաշրջության ոլորտին վերաբերող միջազգային ցուցահանդեսների մասնակցությունը,
- ներքին տրանսպորտային համակարգի արդյունավետությունը,
- օդային կապը այլ երկրների հետ,
- օդային ուղևորափոխադրումների ենթակառուցվածքը,
- երկկողմ օդային ծառայությունների վերաբերյալ համաձայնագրերը,
- մեքենաների վարձույթով զբաղվող օտարերկրյա հայտնի ընկերությունների առկայությունը,
- «Վիզա» պլաստիկ քարտեր սպասարկող բանկոմատների ենթակառուցվածքը,
- հյուրանոցային սենյակների առկայությունը,
- Հայաստանում անցկացվող միջազգային ցուցահանդեսների և փառատոնների քանակը,
- աշխատակիցների վերապատրաստումը:

*«Տնտեսություն և արժեքներ»-ը մրցունակությունն ուսումնասիրող մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով:*

*«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը, որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպություն մասնակցում է վերջինիս կողմից պատրաստվող զեկուլյցներին: Հայաստանն արդեն երրորդ տարին է, ինչ ներառվում է «Մրցունակության համաշխարհային զեկուլյցում» և «Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային զեկուլյցում»:*

Հասցե՝

Հովսեփ Էմին 123  
Երևան, 0051 Հեռ. 0 10 21 97 40  
Էլ.-փոստ. [info@ev.am](mailto:info@ev.am)  
[www.ev.am](http://www.ev.am)